



Ազդարարութեան

Trumpet's Sound Ինն

48-րդ ՏԱՐԻ ԿԱՄԱՆԱԿԻ
ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ 2017



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»
երկամսյա հոգենոր քերք

Պատասխանատու խմբագիր՝
հովի Հրաշ Գոյցուճեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակութիւն

Յարցեր, որ մարդիկ միշտ կուտան 3

Հովի Հրաշ Գոյցուճեան

ՎարժուԵ՛, Եւ ոչ թէ փորձԵ՛. 5

Ան-Մարդեկ Յովակիսան

Չաքարիայի թերահաւատութիւնը 6

Տռ Մրումը

Ինչպիսի՞ փոխութիւններ կ'ակըն-

կալուին այս անձեն, ով կ'ապաշխարէ

Եւ Յիսուսին կ'ընդունի որպէս Տք . . . 9

Արիհա Գոյցուճեան

Փոխուած ու դարձեալ փոխուող 11

Աւք Տիրապ

Այսքան ժամանակ ձեզի հետ Եմ 13

Գարդան Սարգսիսան

Ցուցատախտակը. 16

Ընդունած

Կազմի նկարը «ԱՍՍ» միախնարական խոսքի
կողմէն, 2015թ.

Փառք կուտանք Տերոջը՝

1. 2016 թ.-ի իր ամեն օրինութիւններուն համար
2. որ օգնեց մեր հիւանդներուն Եւ կարիքաւորներուն
3. որ ապահովեց կարիքաւորներու ձեռօրուայ վառելափայտի ծախսերը
4. պատասեաց Եւ Երիտասարդաց ծառայութիւններու համար
5. մեր Սուրբարող սերտողութեան խմբակներու համար
6. «Ազդարարութեան փող» թերթի տարածման համար
7. մասուկներու ծառայութեան համար

Կ'աղօթենք՝

1. 2017 թ.-ի մեր պէտքերուն համար
2. օրինութեան անձրեւներու համար
3. մեր ծառայակիցներու ապահովութեան համար
4. «ԱՍՍ»-ի աւետարանչատան շենքի նորոգման ծախսերու համար (Կիւմրի)

Հարցեր, որ մարդիկ միշտ կուտան

1. Ինչո՞ւ աշխարհը այսքան չար է:

Աստուած ամէն բան կատարեալ ստեղծեց՝ հրեշտակները, կենդանիները, երկինքը, բոյսերը, ծովային կենդանիները, բռչունները, Ադամն ու Եւան... Աստուած մարդուն հնարաւոր ամենազեղեցիկ վայրին մէջ դրաւ՝ Եղեմական պարտէզը: Մարդը մեղանչեց Աստուծոյ դէմ: Սեղքի վարձքը մահ է: Անկումէն ետք Աստուած անոնց դրախտէն դուրս հանեց: Այս աշխարհը մեր հանգստեան տունը չէ, այս մեր երկինքը չէ, հապա մեզ դէպի յափառենականութիւն տանող ճամբան (Ծննդոց 1-3 գլուխներ):

2. Ինչո՞ւ մարդիկ այսքան չար են:

Սենք պէտք է ընդունինք այն ինչ Աստուածաշունչը կը սորվեցնէ թէ «ամէնքը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակսեցան» (Հռովմ. 3:23): Սեր մէջ քարի բան չկայ: Հին Կտակարանը շատ յստակ կ'ընէ, որ նոյնիսկ մէկ ամձ չեղաւ ով կարողացաւ Աստուծոյ պատուիրանները պահել, ոչ ոք չկարողացաւ Աստուծոյ հաւատարիմ մնալ: Այնուամենայնի Աստուած միշտ մարդկանց Իր ձեռքը մեկնեց՝ ուղղարկելով մարգարէներ, Իր Խօսքը..., սակայն մեր մեղաւոր բնոյթը մնաց նոյնը՝ ատող, ազահ, նախանձոտ, վրէմիսնդիր, հպարտ, խոռվարար...

3. Ո՞ւր է Աստուած:

Աստուած միշտ այնտեղ է եւ կը գտնուի բոլոր անոնց կողմէ ովքեր զինք կը փնտոեն: Տէրոջը աչքերը միշտ մեր վրայ են եւ Ինքը պիտի պարզեւարէ իրաքանչիրին իր գործի համաձայն՝ քարի թէ չար: Մենք զիտենք Աստուծոյ չափանշից՝ Աստուածաշունչը, Անոր պատուիրանքներն ու օրէնքները յայտնի են մեզ բոլորիս: Ո՞ւր է Աստուած. «Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհիս վերջը» (Սատր. 28:20):

4. Ովքե՞ր պիտի պատժուին:

Ամբարիշտն ու մեղատրը եւ բոլոր անոնք որոնք մերժեցին Քրիստո-ին: Բաւարար չէ Քրիստոսի մասին իմանալը, այլ մեղքերեղ ապաշ-խարելով, մեղքերուդ բողոքեան համար Իրեն դիմես ըսելով. «ՏՇՌ, մե-դանչեցի, ներէ ինձի»: Խաչի վրայի աւազակը այդպէս աղաղակեց ըսելով. «ՏՇՌ, յիշէ՛ զիս, երբ Քու թագաւորութիւնովդ զաս» (Ղուկ. 23:43, Յովի. 3:16):

5. Ինչո՞ւ այսքան ցաւ կայ:

Երբեն ցաւը մեզ Աստուծոյ կը մօտեցնէ: Երբեմն այն կուգայ որպէս զգուշացում մը, որ արքուն ու զգաստ ըլլանք: Երբեմն այն կ'օգնէ մեզ, որպէսզի երկնաւոր բաները փնտունք: Յիսուսը միակ անձն է, որմէ կրնանք օգնութիւն ստանալ: Յիշէք որ Ան թոյլ չի տար, որ մենք մեր ուժեն աւելի փորձուինք, Ան մեր բարի Հովին է: (Մատթեոս 18:12-14, Յովիաննու 16:33, 9:1-3):

6. Ովքե՞ր պիտի փրկուին:

Բոլոր անոնք որոնք Յիսուսին կը դիմեն ապաշխարութեամբ ու հա-ւատրով: «Ուրիշ մէկո՞վ փրկութիւն չկայ. վասն զի անկէ զատ ուրիշ ա-նուն մը չկայ երկնաքի տակ՝ մարդոց մէջ տրուած, որով կարող ըլլանք փրկուիլ» (Գործք 4:12, 2:38, Մատթ. 18:2-4):

7. Ե՞րբ պիտի ըլլայ աշխարհի վերջը:

Բայց ինչո՞ւ աշխարհը վերջ պիտի ունենայ: Քանի որ Աստուած նոր երկինք ու նոր երկիր պիտի ստեղծէ, քանի որ իմներն անցան եւ ահա ամէն քան նոր եղաւ: Յափշտակութիւնը տեղի պիտի ունենայ եւ շատեր պիտի յափշտակուին ու Տիրոջը դիմաւորեն ամպերու մէջ: Ոչ որ չի զիտեր ժամն ու ժամանակը, բայց միայն Հայրը: (Ղուկ. 17:34, Մարկ. 13:32, Յայտն. 21:1):

Իմ հարցս քեզի, արդեօ՞ք պատրաստ ես Արարիշդ դիմաւորելու այ-սօր: Ապաշխարէ ու մկրտուէ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգիի անունով:

Հ. Պ.

Վարժուէ՛, եւ ոչ թէ փորձէ

Կեանքիս մեծ մասը ծախսած եմ լաւ քրիստոնեայ դառնալու փորձով: Փորձած եմ ըլլալ այն անձը, որը կը պատկերացնէի թէ պէտք է ըլլամ, սակայն եւս նայելով կը տեսնեմ թէ դեռ շատ ընելիք ունիմ: Ասիկա պայքար մըն է, որը կարծես թէ տարածուած երեւոյթ մըն է քրիստոնեաներու մեծամասնութեան մէջ: Սակայն ո՞րն էր ըրած սրբազնութեան մէջ համար այդքան շատ հաւատացեալներ կը զգան թէ մըշտապէս պէտք է բարեփոխուին եւ փորձեն աւելի լաւ դառնալ:

Ես վերջապէս սորվեցայ, որ ջանադրաբար փորձելը, ըստ էութեան, հակառակն էր այն բանին ինչը իսկութեան մէջ պէտք է ընեի: Փորձելը կ'ենթադրէ նուազագոյն ջանքով եւ նուիրուածութեամբ բան մը ընել: Այն կը պահանջէ ցանկութեան փորք նշոյլ մը: Փորձելը կ'ենթադրէ, որ դուն ինչ որ բան մը յաջողցնելու համար ամենաչնչին ջանքը գործադրես, սակայն անպայմանօրէն չի նշանակէր որ կատարելապէս վճռական ես այն յաջողութեան հասցնելու համար:

Աստուածաշունչը ոչ մէկ տեղ չի պատուիրէր մեզ, որ պարզապէս փորձենք լաւ քրիստոնեայ դառնալ: Պողոսը Տիմոթեոսին յանձնարարեց, որ իր անձը վարժեցնէ աստուածապաշտութեան մէջ (Ա Տիմ. 4:7): Աստուծոյ Խօսքը «Վարժուիլ» բառը յաճախ կ'օգտագործէ: Եբրայեցիս 12:11-ի մէջ կը կարդանք. «Յիրաւի ամէն խրատ նոյն ատեն ուրախարար չի թուիր, հապա տրտմարար, բայց ետքը արդարութեան խաղաղարար պտուղը կը հատուցանէ անով վարժուողներուն»:

Պատրաստութիւն, վարժութիւն, նուիրուածութիւն, զոհողութիւն... Ասնք այնպիսի բառեր են, որոնք մեզ ջղագրգիռ կը դարձնեն: Ասոնց մասին երեմն կը մտածենք թէ համահունչ չեն մեր միւս սիրելի բաներուն, որոնցմէ են՝ սէրը, շնորհքը, ողորմութիւնը, համբերութիւնը...

Սակայն, մենք գիտենք, որ առանց վարժութեան ձախորդութիւնը անխուսափելի է: Զինուորները, մարզիկները, երաժիշտները եւ նոյնախակ գործարար մարդիկ պէտք է զանազան վարժութիւններ կատարեն, որպէսզի իրենց սորված գիտելիքները գործնականի վերածեն: Զութակահարները համերգի ժամանակ չեն փորձէր ջութակը նուազել: Վա-

զորդները չեն փորձէր յաղթել վազքի մրցոյթներու ժամանակ: Անոնք կը պատրաստուին այդ օրուան համար, անհամար ժամեր կը վարժուին եւ կը կատարեն անհրաժեշտ զոհողութիւնները իրենց նպատակին հանելու համար:

Թրավիս Ռոպերտսոնը, Քայիֆորնիոյ անշարժ գոյքի եւ պիզնեսի ռազմագէտը ըսած է. «Վարժութիւնը գործողութիւններու ծրագիր կը պահանջէ: Վարժութիւնը այդ ծրագրի հանդէպ նուիրուածութիւն կը պահանջէ: Վարժութիւնը մտածելակերպի տեղաշարժ կը պահանջէ: Վարժութիւնը հաշուետուութիւն կը պահանջէ: Վարժութիւնը փորձագիտական օգնութիւն կը պահանջէ»:

Այսպիսով, մեր անձերը ինչպէ՞ս վարժեցնենք աստուածապաշտութեան: Աղօքը եւ Աստուածաշունչի ուսումնասիրութիւնը իիմնական բաղադրիչներն են, սակայն մենք նաև պէտք է երկրպագենք, հաւատարմօրէն ծառայենք եւ հաղորդակցութիւն ունենաք հաւատակիցներու հետ: Վարժուէ, եւ ոչ թէ փորձէ:

Ան-Մարկարէտ Յովսէփեան

Զաքարիայի թերահաւատութիւնը

Կարդացէ՛ք Ղուկաս 1:5-25

Մեպտեմբեր - Հոկտեմբեր 2016 թ-ի բողարկման մէջ ինքներս մեզ հարցուցինք թէ որքանո՞վ հետեւողական ենք մեր աղօքներուն մէջ: Այժմ աւելի պիտի մտածենք Զաքարիայի արձագանքի մասին, որն ուղղուած էր հրեշտակի պատգամին:

Երբ հրեշտակը յայտարարեց, որ Զաքարիայի աղօքը լսուած էր եւ որ ան որդի մը պիտի ունենար, քահանան ամենեւին պատրաստ չէր նման պատգամ մը լսելու: Ան հրեշտակին հարցուց. «Ինչո՞վ զիտնամ այդ բանը, որովհետեւ ես ծեր եմ ու իմ կինս իր օրերը անցուցած է»: Այս հարցի արմատը անհաւատութիւնն էր, անհաւատութիւն, որը կործանեց իր կեանքի կարեւոր օրը, եւ զիմք համը դարձուց՝ մինչեւ արու զաւակի ծնունդը:

Զաքարիան իրավիճակին կը նայէր զուտ մարդկային տեսանկիւնէն: Չհաւատալու արդարացում կա՞ր աղղեօր: Եթէ պարզապէս մտարերէր իր ազգի պատմութիւնը, պիտի յիշէր որ ժամանակին Աքրահամն ալ նաման իրավիճակի մէջ յայտնուած էր: Աքրահամ՝ 100 եւ Սառա՝ 90 տարեկան էին: Հաւանաբար Աքրահամն ու Սառան աւելի քիչ հաւանութիւն ունեին սերունդ մը ունենալու, քան Զաքարիան ու Եղիսարէթը: Թերեւս Զաքարիան դադրած էր զաւակի խնդրանքով աղօթելը, բայց ան պէտք էր սորվեր, որ Աստուծոյ մօտ անհնարին բան չկայ:

Իհարկէ, կարող են իրավիճակներ ըլլալ, երբ ճիշտ է աղօթքը դադրեցնելը: Պողոսը մարմնի խայթոցի պատճառաւ երեք անգամ խնդրեց Աստուծոյ, որ հեռացնէ այն, սակայն Աստուծոյ պատասխանը այն էր, որ Իր շնորհքը բաւարար էր Պողոսի համար: Ան պէտք էր այդ խընդրանքով աղօթելը դադրեցնելը եւ Աստուծոյ ապահնելը իր բոլոր կարիքները ապահովելու համար: Սա մեզի նոյնական կրնայ պատահիլ: Աստուծած մեզի կրնայ յստակ ընել, որ այլեւս պէտք չէ շարունակենք աղօթել մեր ուզածը ստանալու համար, այլ պէտք է Իրեն վստահինք, որ պէսզի Իր անունը փառաւորուի եւ մեզ օրինութիւն ըլլայ:

Զաքարիայի հարցը ցոյց տուաւ, որ ինք չհաւատաց իրեշտակին: Իր հարցը եւ քիչ աւելի ուշ Մարիամի տուած հարցը էապէս կը տարբերուին իրարմէ: Մարիամի հարցը կը վերաբերէր, թէ ինչպէս կրնար որդի ծննանիլ, քանի դեռ կոյս էր, սակայն ան պատրաստ էր Տերոջը աղախինք ըլլալու: Հարց տալը սխալ չէ: Մտածեցէք Յովհաննէս Ակրտչի մասին: Երբ բանտարկուած էր, ան կասկածներ ունեցաւ թէ արդեօ՞ք Յիսուսը Սեսիան էր: Ան իր աշակերտներէն երկուոք դրկեց Տերոջը հարցնելու «Դուն ա՞ն ես, որ զարու էր, թէ ուրիշի մը սպասեմք» (Մատթ. 11:3): Տէր Յիսուսը քաղցրութեամբ պատասխանեց Ակրտչի հարցին: Սխալ չէ հարցեր տալ այն բաների շորջ, որ չենք հասկնար, այնուամենայնի Զաքարիայի խնդիրը անհաւատութիւնն էր:

Զաքարիան իր անհաւատութեանը համար համրութեամբ պատժուեցաւ, ան չկարողացաւ խօսիլ, մինչեւ որ Աստուծոյ խոստումը իրականացաւ: Մենք կարող ենք նաեւ հարց տալ, թէ արդեօ՞ք Զաքարիան նաեւ խոլ դարձաւ, քանի որ երբ Յովհաննէս թվատուեցաւ մարդիկ ստիպուած էին ձեռքի շարժումներով խօսիլ Զաքարիայի հետ, որպէսզի պարզեն որդու անունը: Պատիմի մէջ նաեւ կար ամօրի գործոնն:

Համբ քահանան չեր կրնար ծառայութիւն կատարել: Մտածեցէ՛ք իր խնդրի մասին, երբ փորձէր Թուոց 6:24-26-ի խօսքերով հաւաքուած ժողովութին Տէրոջը անունով օրինել: Իր ձեռքերը օդը պիտի բարձրացնէր, բայց բերնէն ոչ մէկ խօսք դուրս պիտի չգար: Համբ քահանայ, ասկէ աւելի գէշ ճակատագիր անհնար է պատկերացնել Զաքարիայի համար:

Այսուամենայնիւ, եկէ՛ք դիտարկենք Աստուծոյ կարեկցանքն ու հաւատարմութիւնը: Քահանայի անհաւատութիւնը լրացուցիչ պատիժներ չերաւ: Աստուած չեղեալ չհամարեց որդիի խոստումը: Մենք այս բաննէն կը քաջալերուինք, քանի որ «Աստուծոյ պարգևներն ու կոչումը առանց զղալու են» (Հոռվմ. 11:29): Այն ինչ Աստուած խոստացաւ ընել պիտի կատարէ ալ: Մեր անհաւատարմութիւնը կարող է նշանակել օրինութեան կորուստ, սակայն այդ չի նշանակէր, Աստուծոյ խոստացած բոլոր բարի բանների խափանումը: Բոլոր ամոնք որոնք հաւատացին պիտի փրկուին, սակայն ոմանք պիտի չստանան այն պարգևները որոնք կարող էին ստանալ. ամոնք պիտի փրկուին, սակայն իբր թէ կրակի մէջէն անցած (Ա Կորնբ. 3:15):

Զաքարիայի պատմութիւնը արդիական է: Երբեւ աղօքքի խրնոցներով դիմա՞ծ ենք Աստուծոյ ու մտահոգուած, թէ արդեօ՞ք Ան պիտի պատասխանէ մեզ: Արդեօ՞ք կը շարունակենք աղօքելը: Մտածեցէ՛ք կեանքի մէջ հանդիպած իրական իրավիճակներու մասին: Երիտասարդ քրիստոնեայ տղան կամ աղջիկը կեանքի ընկեր կը փընտունեն, ժամանակը կ'անցնի, սակայն ոչ մէկ պատասխան: Կամ պատկերացուցէ՛ք գործազուրկ անձի մը ով աշխատանք կը փնտուէ, բայց մէկ ուրիշը կը ստանայ այդ աշխատանքը: Մէկ ուրիշը կը ձգտի առողջ ըլլալ, սակայն կը թուլնայ...: Իւրաքանչիւր դէպքի մէջ մարդիկ աղօքեցին: Թերեւս կը սկսինք մտածել թէ արդեօ՞ք Աստուած կը լսէ մեր աղօքքները եւ կը մտահոգուի այն դժուարութիւններով, որոնց կը դիմակայենք:

Առնուազն երկու խնդիր կայ այստեղ: Կա՞մ Աստուծոյ հանդէա մեր ունեցած հաւատքը պիտի կորսնցնենք եւ այստի դադրինք Իրեն վստահիլ եւ Իրմէ կախեալ ըլլալ. կա՞մ ալ պիտի մեկուսանանք եւ ենթադրենք, որ լաւ բան մը մեզի հետ չի պատահիր:

Մենք պէտք է գիտակցինք, որ Աստուած մեզ համար ունի Իր յափունական նպատակները, եւ որ միայն Ան գիտէ մեր ապագան: Ան մեր խնդրանքները աւելի ուշ կարող է պատասխանել, կամ մեր խընդրածէն աւելի լաւ բան մը մեզի շնորհել: Իր ժամանակին Ան կուտայ այն, ինչո՞ւ Իր փառքի եւ մեր օրինութեան համար է:

Եկէ՛ք շարունակենք վստահիլ Իրեն եւ հաւատալ, որ Ան մեր աղօքքները կը պատասխանէ:

Տոն Սրբություն

Ինչպիսի՞ փոփոխութիւններ կ'ակնկալուին այն անձէն, ով կ'ապաշխարէ եւ Յիսուսին կ'ընդունի որպէս Տէր

Երբ որեւէ մեկը Տէրոջը կ'ընդունի, իր կեանքին մէջ փոփոխութիւն տեղի կունենայ: Այն ոչ միայն հոգեւոր ոլորտի փոփոխութիւն է, այլ նաև անհատականութեան, վերաբերմունքի, կեցուածքի, լեզուի, մտքի եւ գործողութիւններու համընդհանուր յեղաշրջում մըն է:

Նախ պէտք է ըմբռնենք, թէ ինչ կը նշանակէ Տէրոջը ընդունիլ: Յիսուսին խնդրել մեր սրտին մէջ Իր տեղը գրաւել չի նշանակէր, որ Ան այժմ մեր սրտի փոքր հատուածը Իր սեփականութիւնը դարձուց, այլ որ մեր ամբողջ սիրտը Իրենը եղաւ: Մեր սրտի իրաքանչիւր անկիւնը Իրեն կը պատկանի, եւ մենք ընդունուած ենք Իր ընտանիքին մէջ:

Յիսուսին ընդունելով հոգեւորապէս կը որդեգրուինք նոր ընտանիքի մը մէջ, եւ սա կը նշանակէ, որ մենք կը պատկանինք նոր Հօր մը: Ընտանեկան մքնոլորտի մէջ ծնած ու մեծցած զաւակներու բնաւորութիւնը էապէս ազդուած կ'ըլլայ անոնց ծնողներէն: Ասիկա գիտականօրէն ապացուցուած է: Հետեւաբար, Յիսուսի ընտանիքին մէջ մեծնալը կ'ենթաղիք, թէ մենք պէտք է որդեգրենք Անոր յատկանիշներն ու կենցաղավարութիւնը:

Քանի որ Յիսուսը սուրբ է եւ մաքուր, մենք, ովքեր ժամանակին մեղադրման էինք, այժմ պէտք է Յիսուսի բնաւրութեան գիծերը արտացոլենք մեր կեանքին մէջ: Այս այսպէս պէտք է ըլլայ, քանի որ Աստուած մեզ Քրիստոսով սուրբ եւ մաքուր կը տեսնէ, Ան մեր մեղքերը ներած է եւ այժմ կը տեսնէ մեզ Յիսուսի կատարելութեամբ (Եփես. 4:24):

Մեղաւոր ու յանցաւոր ըլլալէ դէպի մաքրուած ու անմեղադրելի ըլլալու այս միտքը իսկապէս պէտք է, որ իր հետքը թողու մեր կեանքի իրաքանչիւր ասպարեզին վրայ: Այս կը նշանակէ, որ մենք հիմա կը սիրենք մեր թշնամիներուն, կը յարգենք անոնց որոնք յարգանքի արժանի չեն, կը ներենք անոնց որոնք ներման արժանի չեն, հաւատը կ'ունենանք, նոյնիսկ այն ժամանակ, երբ ամէն ինչ անյոյս է, կը կարեկցինք կարիքաւորներուն, Աւետարանը կը հոչակենք ամէն հնարաւոր առիքին եւ ամէն քանի մէջ մեր լաւագոյնը կ'ընենք Աստուծոյ փառքին համար (Կոռ. 3:23):

Բ Կորնթացիս 5:17-ը կ'ըսէ թէ, երբ Տէր Յիսուսին կ'ընդունինք, մենք նոր արարած մը կ'ըլլանք: Հոգեւոր փոփոխութիւնը մատնանշող ֆիզիքական որեւէ երեւոյթ չի երեւնար, սակայն մեր էութեան ամէն մի մասնիկը Քրիստոսով կը վերանորոգուի ու կը քարենփոխուի: Ասիկա մեզ կը փոխէ ներսէն դէպի դուրս: Մենք մեր կեանքին մէջ կը սկսինք զինք արտացողել եւ իր օրինակին հետեւիլ: Այս ամէնք կ'ընենք, քանի որ մեզ համար Անոր կատարած մեծ զոհողութիւնը հասկնալով, որեւէ այլ ընտրութեան տեղ չի մնար մեզ, հապա միայն՝ անընդհատ իրեն փառք տալը (Ա Կորնթ. 10:31):

Հաշուի առնելով այս ճշմարտութիւնները, մենք վստահաբար կարող ենք ըսել, որ երբ կ'ապաշխարենք ու կը հետեւինք Յիսուսին որպէս Տէր, մեր մէջ ամէն ինչ կը փոխուի: Այս փոփոխութիւնը կ'ազդէ մեր ամէն մէկ մտքի, գործողութեան եւ խօսքի վրայ:

Արլին Գույուճեան

* * *

Փոխուած ու դարձեալ փոխուող

Ինձի հետաքրքիր է իմանալ, թէ երբեւ վախցա՞ծ եք Պողոս առաքեալի հետեւեալ յայտարարութեամբ. «Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած մըն է: Հիները անցան եւ ահա ամէն բան նոր եղաւ» (Բ Կորնք. 5:17): Իւրաքանչիւր անձ, ով պահ մը լրջութեամբ կը խորիի այս խօսքի շուրջ, կ'ընդունի թէ իր կեանքին մէջ եղած են պահեր, երբ հինը կարծես թէ ամենեւին հեռացած չէ: Ըստ էութեան, այն ներկայ է: Կը քուայ թէ յաճախ նոր բնութիւնն է քացակայ, եւ ոչ թէ հինը:

Կը խորիիմ թէ, այս համարը երկար տարիներու ընթացքին օգտագործուած է սնուցանելու այն միտքը, թէ երբ մարդիկ քրիստոնեայ կը դառնան, անոնք մէկ գիշերուայ մէջ կը Վերափոխուին եւ իրենց կեանքը ակնթարթօրէն կը նմանի Պողոս առաքեալի եւ մայր Թէքեզայի լաւագոյն յատկանիշներու համատեղ գոյակցութեանը: Ես կրնամ մտաբերել Կիրակնօրեայ դպրոցի որոշ երգեր, որոնք կարծես թէ այս կասկածելի վարդապետութեան համակիրները ըլլան: Սակայն մեզմէ անոնք որոնք իրական աշխարհի մէջ կը բնակին, կը գտնեն որ ընդհանուր առմամբ, այդ այդպէս չէ: Պողոսը, ով յստակ եւ իրատեսական էր մարդկային բնութեան վերաբերեալ, անկասկած մտադրուած չէր, որ մենք իր խօսքէն հասկնայինք թէ այդ քաղցր երազանք մըն է, որուն ակնթարթօրէն կարող ենք տիրանալ:

Այս գաղափարի խնդիրն այն է, որ անիրատեսականօրէն կը քագմապատկէ մեր սպասելիքները միմյանց եւ ինքներս մեզ հանդէա: Երբ որեւէ մէկը կը ձախողի վարուիլ այնպէս ինչպէս մենք կը պատկերացնէինք թէ «Քրիստոսով նոր ստեղծուած մը» պէտք է վարուէր, ապս կարծես թէ հիասքափութիւն կը վերապրինք եւ կը զարմանանք թէ ինչպէս կրնայ «Քրիստոսով նոր ստեղծուած մը» այդպէս վարուի: Այդ աւերածութեան ազդեցութիւնը իմանալու համար փորձէք խօսիլ նորադարձ երիտասարդ քրիստոնեայի մը հետ, ով արդէն հասցուցած է խորապէս ցաւ ապրիլ ու հիասքափուիլ հաւատքի մէջ տարեց քրիստոնեայի վարքին նայելու պատճառով: Կամ ի՞նչ ըսենք այն քրիստոնեայի մասին, ով կը մտածէ թէ, քանի որ նման ձեւով ձախողեցաւ, գուցէ

ամենեւին Քրիստոսվ նոր արարած չէր եղած:

Ի՞նչը պիտի ըլլայ ակնկալիքներու մէջ չափազանց գաղափարապաշտական եւ ասոր զուգորդող խորը հիասքափութեան մեր արձագանքը: Մի զուցէ պէտք է այլ կերպ մտածենք, բսելով թէ՝ եկէք վատը ակնկալիքն եւ երբեք յուսախափութեան չենք մատնուիր: Թերեւս մենք մեզ այնպէս պէտք է վարժեցնենք, որ ճախորդութիւններու հետեւանքով գոյացած յուսախափութիւնները մեր մտքերը չկարողանան խռովեցնել եւ միեւնոյն ժամանակ կարողանանք հիանալ, եթէ որեւէ մէկը կարողանայ իր կեանքին մէջ Քրիստոսը արտացոլել: Բայց իհարկէ այդպէս ճիշտ չէ: Պողոսը նոյնիսկ քայլայուող Կորնթացիններուն «Քրիստոս Յիսուսով սրբութեան» կը կոչէ եւ «ոչ մէկ շնորհքով նուազներ»: Չեմ կարծէր թէ Պողոսը հաճոյախօսութիւն կ'ըներ այստեղ: Որպէսզի կարողանանք աճել եւ գործել անկատար, սակայն փրկուած համայնքի մը մէջ, մենք պէտք է գտնենք հեռանկար մը, որը կ'օգնէ մեզ զճնշուիլ մարդկային ճախորդութիւններու ժամանակ, բայց այնուամենյանի երբեք չհաշտուիլ միջակուրեան գաղափարով:

Նորէն ստեղծուած ըլլալու փոխաբերութիւնը ճիշտ տեղին է ընտըրուած: Նորածինի մէջ կը տեսնենք նոր ստեղծագործութիւն եւ նոր կեանք: Այն հարուստ է ներուժով: Սակայն իրաքանչիւր ծնող գիտէ, որ մանկութենէն դէպի հասունութիւն այդ ճամբորդութեան ընթացքին կան բազմաթի քերրուած ծունկեր, որոնք պէտք է վիրակապտին, կան շատ բափթիած սենեակներ, որ պէտք է կարգի բերուին, եւ երբեմն հիւանդութիւններ, որոնք պէտք է բուժուին: Լաւ ծնողը եւ իրատես է եւ հեռատես: Ծնողի սրտին մէջ կայ սիրող ընդունելութիւն, թէ ինչպիսին է իր զաւակը, եւ նաեւ կայ այն տեսլականը, թէ ինչ կրնայ դառնալ եւ պէտք է դառնայ իր զաւակը ապագային: Այդ իմաստով, Պողոսի մեկնարանութիւնը նոր ստեղծուած ըլլալու կապակցութեամբ կատարելապէս կը համապատասխանէ այն ինչին ականատես եմ եկեղեցին մէջ եւ նաեւ իմ մէջ: Այն ինձ կը յիշեցնէ, որ ինչ որ նոր եւ հիանալի բան սկսած է կեանքին մէջ, այն ինձ կը յիշեցնէ, որ ես եւ այն մարդիկի որոնք շուրջս են հարուստ են աստուածային ներուժով, բայց դեռ կատարեալ չեն, գործը աւարտին հասած չէ:

Քաղուածք՝ Ռէքս Տիրլավի
«Արդեօ՞ք Աստուած իսկապէս բարի է» գրքէն

ճանչնալու համար, ամուսիններ տարիներով կողք կողքի կ'ապրին ու դեռ իրար չեն ճանչնար»: Մարդկայնօրէն այս, բայց ոչ այս պարագային: Անոնք ամէն օր տեսան Յիսուսի սէրք մեղաւորի նկատմամբ, Անոր համբերութիւնն ու գութը, տեսան Անոր զօրութիւնն ու գերրնական հրաշքները, լսեցին Անոր ուսուցումները ու տեսան Անոր մարուր կեանքը, ինչպէս Յովհաննէս կ'ըսէ իր առաջին նամակին մէջ. «Կենաց Քանին վրայով որ սկիզբէն էր, որու համար լսեցինք, զոր մեր աչքերով տեսանք, որու նայեցանք ու մեր ձեռքերը շօշափեցին...»: Տէր Յիսուսին ճանչնալու համար բաւարար է մէկ հանդիպում, մէկ հպում, մէկ զրոյց ու Ան կարող է փոխել կեանքը, քանի որ մենք զինք կը ճանչնանք ոչ թէ որովհետեւ կարող ենք Աստուած ճանչնալ, հապս որովհետեւ Ինք Իր Անձը մեզ կը յայտնէ, իսկ Յիսուս Իր անձը աշակերտներուն բազում անգամներ յայտնած էր:

Հին Կտակարանին մէջ Աստուած հրաշքներով, մեծ հարուածներով ազատեց Խրայէլին եգիպտոսի գերութենէն, 40 տարի կերակրեց անապատին մէջ, թժկեց ու առաջնորդեց, բայց տակաւին մարդիկ զինք չճանչցան, չհաւատացին զինք, չնայած որ 40 տարիներ Աստուած իրենց հետ էր: Ուրեմն տարին ընդհանրապէս նշանակութիւն չունի, կարեւոր մարդու սիրտն է:

Սիրելի՛ բարեկամ, ինչպիսի՞ն է քու վիճակի այսօր: Չեմ զիտեր քանի տարուայ հաւատացեալ ես, բայց արդեօ՞ք ճանչցար Քրիստուին, արդեօ՞ք փորձութեան կամ դժուարութեան առջեւ երք հանդիպի, Տէրոջը կը շարունակե՞ս վստահիլ, կը հաւատա՞ս Իրեն, թէ՞ կը մոռնաս այս բոլոր հրաշքները ու բարիքները որ Տէրը ըրած է կեանքիդ մէջ քեզ համար, քանի որ քեզ սիրեց:

Թէրեւս կեանքիդ տարիներուն մէջ երբեմն Իր հետ չեղար, հեռացար, բայց Ան տակաւին քեզ կ'ըսէ. «Այսրան ժամանակ ես քեզ հետ եմ...», ու ոչ միայն այսրան, Ան խոստացաւ ըսելով. «Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վերջը», նաեւ ըսաւ. «Բնաւ քեզ պիտի չքողում, ու բնաւ քեզ երեսէ պիտի չձգեմ»: Ի՞նչ օրինեալ Տէր ունինք:

Վարդան Սարգսիսեան

այս հարցը տուած չէին ըլլար: Երկու գլուխ առաջ կը կարդանք, որ Տերը արդեն ըստ էր. «Ան որ Ինձի կը հաւատայ, Ինձի չի հաւատար, հապա զիս դրկողին, եւ ան որ զիս կը տեսնէ, զիս դրկողը կը տեսնէ» (Յովհ. 12:44-45):

Արդեօ՞ք Յիսուսի սխալն էր որ աշակերտները 100%-ով զինք չհաւատացին, երբ այդ խօսքերը ըսաւ: Տեր Յիսուս յստակ ըսաւ թէ ով Իրեն տեսնէ, Հօրը տեսած կ'ըլլայ: Բայց եկեք չքարկոծենք Փիլիպպոսին ու Տասներկութին եւ մեր մասին մոռնանք: Արդեօ՞ք կը հաւատանք Աստուծոյ Խօսքի իրաքանչիր համարին, իրաքանչիր խոստմանը, թէ՞ կը մոռնանք եւ Աստուծոյ կրկին ու կրկին հարցեր կուտանք, հարցեր, որոնք կապ ունին Անոր Սիրոյ, հոգատարութեան, նախախնամութեան եւ հաւատարմութեան հետ:

Ուրիշ ուշագրաւ բան մը եւս: Նկատեցէք որ Յիսուս չըսաւ. «Այսքան ժամանակ ինձի հետ եք...», այլ «այսքան ժամանակ ձեզի հետ եմ»: Կը թուայ թէ աշակերտներն էին Տեր Յիսուսի հետ այս օրուըն, երբ Իմք կանչեց անոնց ու սկսան Իրեն հետեւիլ, երեք ու կէս տարի Յիսուսի հետ եղան, բայց ոչ, Տերը կ'ըսէ. «Այսքան ժամանակ Ես ձեզի հետ եմ...»:

Տերը աշակերտներուն հետ էր ամէն ժամանակ՝ երբ Գալիլիայ ծովուն վրայ փոթորիկ բարձրացաւ ու կը վախնային խորտակուիլ, անոնց հետ էր երբ փարիսեցիներն ու դպիրները իրենց հարցերով կը նեղէին, անոնց հետ էր երբ անապատ տեղ ուտելու բան չունիէին, անոնց հետ էր երբ իրար հետ հարցեր կ'ունենային, անոնց հետ էր տանը, տաճարին մէջ, դուրսը եւ ամէն տեղ... եւ այսքանը տեսնելէ, լսելէ եսոք, ինչպէ՞ս կ'ըլլայ որ մարդ չհասկնայ, զգիտակցի որ Յիսուսը եւ Հայրը մէկ են»:

Երբ ես Յիսուսի հետ եմ, սա շատ բան չի փոխեր, բայց երբ Յիսուսը ինձի հետ է, ուրեմն ամէն ինչ ուրիշ է: Մեծ պատի է, երբ թագաւորի կողը կանգնիմ, բայց աւելի մեծ պատի է, որ թագաւորը կողքս կը կանգնի: Իմ իր կողը կանգնիլը, ոչ մէկ բան չի փոխեր, բայց իր իմ կողքս կանգնիլը ամէն բան կը փոխէ: Թագաւորներու Թագաւորը ինձի հետ է, ի՞նչ մեծ շնորհը է սա, մեծ արտօնութիւն: «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ» (Հռովմ. 8:31):

Թերեւս մէկը առարկէ ու ըսէ. «3.5 տարին քիչ ժամանակ է անձ մը

«Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, եւ զիս չճանչցար» (Յովհ. 14:9)

Յովհաննու 13-16 գլուխմերուն մէջ Տէր Յիսուսը շատ մտերմիկ խօսակցութիւն կ'ունենայ Իր աշակերտներուն հետ, եւ այդ խօսակցութիւնը կ'աւարտուի մեզի քաջ ծանօթ Տէր Յիսուսի քահանայապետական աղօթքով (Յովհ. 17-րդ գլուխ):

Տէր Յիսուսը Թովմասի հարցին թէ իրենք չեն գիտեր թէ Յիսուս ուր կ'երթայ եւ ինչպէս պիտի գիտնային ճամբան, Տէրը կ'ըսէ հետեւեալ խօսքերը. «Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը եւ կեանքը. մէկը Հօրը քով չի գար՝ եթէ ոչ ինձնով: Եթէ զիս ճանչնայիք, իմ Հայրս ալ պիտի ճանչնայիք եւ ասկէ յետոյ պիտի ճանչնաք զանիկա ու տեսնէք զանիկա» (Յովհ. 14:7):

Այս անգամ Փիլիպպոս կը շարունակէ եւ կ'ըսէ. «Տէ՛ր, Հայրը մեզի ցոյց տուր, ու հերիք է մեզի», ու Տէրոջը պատասխանը կ'ըլլայ. «Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, եւ զիս չճանչցա՞ր, Փիլիպպոն, ան որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ»:

Փիլիպպոսի խօսքը բաւական համարձակ ու կտրուկ էր, որը աւելի Պետրոս առաքեալին բնորոշ է, քան թէ Փիլիպպոսի, որովհետեւ Պետրոսը միւս բոլոր աշակերտներէն աւելի տաքարիւնն ու համարձակն էր այսպիսի դէպքերու ժամանակ, քայց կը տեսնենք որ Փիլիպպոսը առաջ կ'անցնի ու հարց կը բարձրացնէ. «Հօրը ցոյց տուր ու հերիք է մեզ, ո՞վ է Հայրը որուն կը տեսնենք որ անդադար կ'աղօթես, որուն կամքը կուզես կատարել, որուն միշտ փառքը կ'ընծայես, որու թագաւորութիւնը կը քարոզես եւ որու իշխանութիւնովը հրաշքներ կը գործես...»:

Իրականութեան մէջ այս հարցը նաեւ միւս աշակերտներու սրտի հարցն էր, բոլորին բերանէն Փիլիպպոս խօսեցաւ, կարծես իրենց խօսնակը ըլլար: Բոլորն ալ այս հարցին վրայ իրենց շունչը բռնած կը սպասէին Անոր պատասխանին: Քայց եթէ անոնք քիչ մը ուշադիր ըլլային ու հաւատային Տէր Յիսուսի ըսած ամէն մէկ խօսքին, իրենք

Յուցատախտակը

Կոյր տղայ մը, շէնքի մը աստիճաններուն վրայ նստած էր, ուոքերուն առջև գլխարկ մը զետեղուած, որուն մէջ մի քանի լումաններ կային: Ան ցուցատախտակ մը բռնած էր որ կ'ըսէր. «Կոյր եմ, խնդրեմ օգնեցէք»: Մինչ այդ մարդ մը կ'անցնէր հոնկէ, ան քանի մը լումայ հանեց գրապանէն եւ գլխարկին մէջ դրաւ: Ապա ցուցատախտակը առաւ, ետեսի կողմը դարձուց եւ բաններ մը գրեց: Ետ դրաւ ցուցատախտակը որպէսզի անցորդներ տեսնեն նոր գրութիւնը: անկէ վերջ գլխարկը սկսաւ շուտով լեցուիլ: Շատ աւելի մարդիկ սկսան դրամ տալ կոյր տղային:

Այդ կէսօրէ վերջ մարդը որ ցուցատախտակին գրութիւնը փոխած էր, վերադարձաւ տեսնելու թէ ինչպէս էր կացութիւնը: Կոյր տղան ճանչցաւ անոր ուտնածայնը եւ հարցուց. «Պարոն, դո՞ւր էիք որ այս առտու իմ գրութիւնս փոխեցիք: Արդեօք ի՞նչ էր ձեր գրածը:

Մարդը բաս. «Սիայն ճշմարտութիւնը արտաքերեցի: Քու ըսածդ ըսի բայց տարրեր ձեւով: Այսպէս գրեցի. «Այսօր գեղեցիկ օր մըն է, բայց ես չեմ տեսներ»»:

Երկու գրութիւններն ալ կը բացատրէին այս տղուն վիճակը, սակայն առաջինը պարզօրէն կ'ըսէր թէ տղան կոյր է, իսկ երկրորդը մարդոց կ'անդրադարձներ թէ իրենք բախտաւոր են որ կոյր չեն: Արդեօք զարմանալո՞ւ ենք որ երկրորդ գրութիւնը շատ աւելի ազդեցիկ եղաւ:

Այս պատմութենէն կը սորվինք թէ պէտք է մեր ունեցածին համար շնորհակալ ըլլանք: Նաեւ ըլլալու ենք ստեղծագործող եւ բարեփոխող: Մտածենք տարրեր ձեւով եւ դրական կերպով: Երբ կեանքք հարիւր պատճառ կուտայ որ լաս, անոր ցոյց տուր որ հազար պատճառ ունիս ժպտելու: Անցեալդ յիշէ առանց ափսսանքի, ներկադ դիմազքաւէ վստահութեամբ եւ ապագայիդ համար պատրաստուէ անվախութեամբ: Հաւատքդ պահէ եւ վախող վանէ:

«Ով իմ անձս օրինէ Տերը եւ Անոր բոլոր բարերարութիւնները մի՛ մոռնար» (Սաղմոս 103:2):